# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## «ՎԱՐՁՈՒԹԱՅԻՆ ՎԿԱՅԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ, ՖԻԼՄԸ ԴԱՍԱԿԱՐԳԵԼՈՒ ԵՎ ՖԻԼՄԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ ՆՇՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| հ/հ | Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը | Առարկության, առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունը |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Armine Anda<br>29.06.2023 22:33:50 | Կառավարության այս որոշումից պարզ չէ, թե որտեղ, ով և ինչպես է կատարում ֆիլմի դասակարգումը և տարիքային սահմանափակման նշումը: Արմինե Անդա Պրոդյուսեր, Ռեժիսոր, Սցենարիստ, Դերասանուհի Հոշկի ֆիլմ սպը-ի հիմնադիր ՀՀ կինեմատոգրաֆիայի օրենքի նախաձեռնող armineaa@yahoo.com, hoshkeefilm@gmail.com 37491505266hoshkeefilm@gmail.com 37491505266 | | Շնորհակալություն: դիտողությունն ընդունվել է: |
| 2 | Armine Anda<br>29.06.2023 22:28:13 | Առաջարկ 6. Կառավորության որոշումից դուրս բերել անպարկեշտ արտահայտությունների հիմքով վարձութային վկայականի մերժման | | Ընդունվել է մասնակի Կինեմատոգրաֆիայի մասին օրենքի 7-րդ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | կետը: "ֆիլմը պարունակում է անպարկեշտ արտահայտություններ (բացառությամբ նյութական կրիչի վրա ֆիլմի վարձույթի համար վարձութային վկայականի տրամադրման)." Անպարկեշտ արտահայտությունը չափազանց լայն հասկացություն է և կարող է դառնալ գործիք ֆիմերի վարձույթ արգելելու համար: Եթե արդեն կատարված է տարիքային սահմանափակման նշումը, այս կետի կարիքը ընդհանրապես չկա: Մեծահասակն ինքն է ընտրում ինչ ֆիլմ նայել, ինչ՝ ոչ: Եվ անպարկեշտ արտահայտություններ կան նույնիսկ արվեստի ամենաբարձր որակի աշխատանքներում: Արմինե Անդա Պրոդյուսեր, Ռեժիսոր, Սցենարիստ, Դերասանուհի Հոշկի ֆիլմ սպը-ի հիմնադիր ՀՀ կինեմատոգրաֆիայի օրենքի նախաձեռնող armineaa@yahoo.com, hoshkeefilm@gmail.com 37491505266hoshkeefilm@gmail.com 37491505266 | | հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջով սահմանվում է ֆիլմը դասակարգելու և ֆիլմի տարիքային սահմանափակման մասին նշում կատարելու կարգը: Տարիքային սահմանափակումը պետք է հիմնավորված լինի, հետևաբար սահմանվել են կողմնորոշիչ դրույթներ: |
| 3 | Armine Anda<br>29.06.2023 22:19:58 | Առաջարկ 5. ՎԱՐՁՈՒԹԱՅԻՆ ՎԿԱՅԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ, ՖԻԼՄԸ ԴԱՍԱԿԱՐԳԵԼՈՒ ԵՎ ՖԻԼՄԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ ՆՇՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ կառավարության որոշումից դուրս բերել ժամանակացույցին և | | Չի ընդունվել Վարձութային վկայականի ժամանակացույցը շուկայի կարգավորմանը ուղղված անհրաժեշ գործընթաց է: Կինեմատոգրաֆիայի մասին օրենքի 7-րդ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | թիրախային հանդիսատեսին առնչվող բոլոր կետերը: Հիմնավորումները. տես՝ Առաջարկ 2-ի և Առաջարկ 4--ի հինավորումները: Հնարաբոր չէ նշել այս առաջակին առնչվող հոդվածների և կետերի համարները, քանի որ ի-դրաֆթի իտարբերակում դրանք կրկնվում են: Արմինե Անդա Պրոդյուսեր, Ռեժիսոր, Սցենարիստ, Դերասանուհի Հոշկի ֆիլմ սպը-ի հիմնադիր ՀՀ կինեմատոգրաֆիայի օրենքի նախաձեռնող armineaa@yahoo.com, hoshkeefilm@gmail.com 37491505266hoshkeefilm@gmail.com 37491505266 | | հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջով սահմանվում է ֆիլմը դասակարգելու և ֆիլմի տարիքային սահմանափակման մասին նշում կատարելու կարգը, որը ինքնին փոխկապակցված է հանդիսատեսի թիրախային խմբերը որոշելու հետ: |
| 4 | Armine Anda<br>29.06.2023 22:15:26 | Օտարալեզու ֆիլմերի թարգմանության պահանջի հետ կապված (Կառավարության առաջարկվող որոշման Հոդվածի և կետի համարները չեմ նշում, քանի որ ի-դրաֆթի տարբերակում դրանք կրկնվում են)՝ Տես Առաջարկ 1. Կինեմատոգրաֆիայի մասին օրենքի 16-րդ հոդվածի կետ 2-ի հայերեն կրկնօրինակման պայմանը ուժի մեջ է մտնում 2030 թվականին՝ ըստ Հոդված 28 կետ 1-ի: Արմինե Անդա Պրոդյուսեր, Ռեժիսոր, Սցենարիստ, Դերասանուհի Հոշկի ֆիլմ սպը-ի հիմնադիր ՀՀ կինեմատոգրաֆիայի օրենքի նախաձեռնող armineaa@yahoo.com, hoshkeefilm@gmail.com | | Չի ընդունվել: Կրկնօրինակման ժամկետները արդեն իսկ սահմանված են օրենքով, և կարգում հավելյալ նշում կատարելու անհրաժեշտությունը բացակայում է: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 37491505266hoshkeefilm@gmail.com<br>37491505266 | | |
| 5 | Armine Anda<br>29.06.2023 22:15:26 | Առաջարկ 4. - Որոշումից դուրս բերել թիրախային հանդիսատեսի պահանջին վերաբերվող որևէ կետ (Հոդվածի և կետերի համարը չեմ կարող նշել, քանի որ ի-դրաֆթի նախագծում հոդվածների և կետերի համարները կրկնվում են): Առաջարկ 4-ի հիմնավորում. Ինչպես և ժամանակցույցի դեպքում, թիրախային հանդիսատեսին առնչվող կետերը միջամտություն են շուկայական հարաբերություններին: Արմինե Անդա Պրոդյուսեր, Ռեժիսոր, Սցենարիստ, Դերասանուհի Հոշկի ֆիլմ սպը-ի հիմնադիր ՀՀ կինեմատոգրաֆիայի օրենքի նախաձեռնող armineaa@yahoo.com, hoshkeefilm@gmail.com 37491505266hoshkeefilm@gmail.com 37491505266 | | Չի ընդունվել: Կինեմատոգրաֆիայի մասին օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջով սահմանվում է ֆիլմը դասակարգելու և ֆիլմի տարիքային սահմանափակման մասին նշում կատարելու կարգը, որը ինքնին փոխկապակցված է հանդիսատեսի թիրախային խմբերը որոշելու հետ: |
| 6 | Armine Anda<br>29.06.2023 21:59:44 | Առաջարկ 3. - Օտարալեզու փաստաթղթերի պաշտոնական թարգմանությունների պահանջի վերաբերյալ (Հոդվածի և կետերի համարը չեմ կարող նշել, քանի որ ի-դրաֆթի նախագծում հոդվածների և կետերի համարները կրկնվում են) ՎԱՐՁՈՒԹԱՅԻՆ ՎԿԱՅԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ, ՖԻԼՄԸ ԴԱՍԱԿԱՐԳԵԼՈՒ ԵՎ ՖԻԼՄԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ | | Չի ընդունվել Օտար լեզվով փաստաթղթերի հայերեն թարգմանության պահանջը սահմանված է «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, միաժամանակ պաշտոնական թարգմանություն է |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ՄԱՍԻՆ ՆՇՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ կառավարության որոշումից դուրս բերել պաշտոնական թարգմանությունների պահանջը: Առաջարկ 3-ի հիմնավորում. Պաշտոնական թարգմանության պահանջը ծանրաբեռնում է ֆիլմարտադրողին թե ֆինանսական և թե ժամանակի ռեսուրսների ներդրմամբ: Ֆիլմարտադրողը իրավական անձ է և սխալ թարգմանություն ներկայացնելու համար պատասխանատու է օրենքի առաջ: Քանի որ պաշտոնական թարգմանությունները անվճար չեն, Ազգային ֆիլմի, համատեղ արտադրության կարգավիճակների համար փստաթղթերի պաշտոնական թարգմանությունների համար, ֆիլմարտադրողն առանձին դրամաշնորհի կարիք կունենա: Համատեղ արտադրության մեջ հաջողված ֆիլմարտադրողների հաջողության գաղտնիքը նաև լեզուներին տիրապետելն է, և դրա համար առանձին ռեսուրսների կարիք չունենալը: Միջազգային փաստաթղթերը ֆիլմարտադրողների միջև ստորագրվում են առանց պաշտոնական թարգմանությունների: Եվ պետության համար իր սեփական ֆիլմարտադրողի հանդեպ անվստահությունն է միայն դառնում այսպիտի ավելորդ ծանրաբեռնվածության պատճառ: Ստացվում է նաև, որ միջազգային գործընկերները ավելի են վստահում ՀՀ իրավական անձերին, քան ՀՀ | | համարվում նաև լիցենզավորված թարգանչական գրասենյակների ծառայությունը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | պետական կառույցները: Խախտվում է նաև Դրամաշնորհի մասին օրենքի՝ աջակցություն ստացողին չծանրաբեռնելու դրույթը: ՀՀ կինեմատոգրաֆիայի օրենքի ամբողջ նշանակությունը կինոարտադրության զարգացումն է՝ կինոարտադրողի համար բարենպատ պայմաններ ստեղծելով ու աջակցության մեխանիզմի շնորհիվ՝ արտադրողի և պետության հարաբերությունները գործընկերային դաշտ բերելով: Արմինե Անդա Պրոդյուսեր, Ռեժիսոր, Սցենարիստ, Դերասանուհի Հոշկի ֆիլմ սպը-ի հիմնադիր ՀՀ կինեմատոգրաֆիայի օրենքի նախաձեռնող armineaa@yahoo.com, hoshkeefilm@gmail.com 37491505266hoshkeefilm@gmail.com 37491505266 | | |
| 7 | Armine Anda<br>29.06.2023 21:48:02 | Առաջարկ 2 - ՎԱՐՁՈՒԹԱՅԻՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ հոդվածի կետ 1-ի առնչությամբ. Վարձութային վկայական տրամադրելու պահաջներից դուրս բերել ժամանակացույցին առնչվող որևէ դրույթ: Առաջարկ 2–ի հիմնավորում. Հասկանալի չէ, թ ինչու վարձութային վկայականի համար պետք է ներկայացվի ժամանակացույց: Սա ոչ միյան ավելորդ ծանրաբեռնվածություն է թե | | Չի ընդունվել Վարձութային վկայականի ժամանակացույցը ոչ թե շուկայական միջամտություն է, այլ շուկայի կարգավորմանը ուղղված անհրաժեշ գործընթաց: Կինեմատորգարֆիայի մասին օրենքի 16-րդ հոդվածով սահմանված է |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | արտադրողի և թե Ազգային մարմնի վրա, այլև կբերի Ազգային մարմնի կողմից շուկայական հարաբերությունների մեջ միջամտության: Կինեմատորգարֆիայի մասին օրենքի 16-րդ հոդվածի կետ 2-ը ունի ընդամենը երկու պայման՝ տարիքային սահմանափակման մասին համապատասխան նշում և հայերեն կրկնօրինակում (վերջինս, ըստ Կինեմատոգրաֆիայի մասին օրենքի Հոդված 28 կետ 1-ի. ուժի մեջ է մտնում 2030 թվականին, ինչն ի դեպ, հաշվի առնված չէ, այս որոշման մեջ): Ազգային մարմինը այս պայմանները բավարարելու դեպքում պարտավոր է տալ վարձության վկայական: Այն տրվում է մեկ անգամ, իսկ վարձույթ տեղի է ունենալու տարիների ընթացքում: Ինչ պատճառով և նպատակով է այս որոշման մեջ ներառված ժամանակացույցի պահանջ, հասկանալի չէ, եթե ոչ շուկան կառավարելու: Արմինե Անդա Պրոդյուսեր, Ռեժիսոր, Սցենարիստ, Դերասանուհի Հոշկի ֆիլմ սպը-ի հիմնադիր ՀՀ կինեմատոգրաֆիայի օրենքի նախաձեռնող armineaa@yahoo.com, hoshkeefilm@gmail.com 37491505266hoshkeefilm@gmail.com 37491505266 | | երկու պայման, սակայն նույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով Կառավարությունը լիազորված է ենթաօրենսդրական ակտով սահմանելու վարձության վկայական տրամադրելու ընդհանուր ընթացակարգը, հետևաբար՝ կարգում ներառվել են գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ կետեր, միաժամանակ՝ կրկնօրինակման ժամկետները արդեն իսկ սահմանված են օրենքով, և կարգում հավելյալ նշում կատարելու անհրաժեշտությունը բացակայում է: Վարձության վկայականը տրամադրվում է հստակ ժամանակացույցով ոչ միայն շուկայի կարգավորման համար, այլ նաև հաշվի առնելով միջազգային փորձը, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ֆիլմերի իրավատերերը նույնպես ֆիլմերի տարածման լիցենզիան դիստրիբյուտորներին տրամադրում են հստակ ժամկետներով, ոչ թե ընդմիշտ: |
| 8 | Armine Anda<br>29.06.2023 21:39:10 | Առաջարկ 1 - Հոդված - ՎԱՐՁՈՒԹԱՅԻՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ, կետ 2.2 -ի դիստրիբյուտորական ընկերությունը ֆիլմի տարաշման իրավատեր անվանելու առնչությամբ. Դիստրիբյուտորական ընկերության համար օգտագործել ՝ ֆիլմի տարածման լիցենզիայի տեր՝ բառակապակցությունը, ինչպես ստորև կետերում օգտագործվում է ցուցադրողների հետ կապված: Առաջարկ 1 –ի հիմնավորում. Միջազգային պայմանագրերում դիստրիբյուտորական ընկերությունը համարվում է ֆիլմի տարածման բացառիկ և ոչ-բացառիկ լիցենզիայի տեր և իրավատեր բառը օգտագործվում է միայն ֆիլմի իրավատեր բառակապակցության մեջ: Իրավատեր բառը կարող է Լիզենզիայի տեր բառակապակցության հետ շփոթություն առաջացնել: Դիստրիբյուտորական ընկերության | | Շնորհակալություն: Առաջարկությունը ընդունվել է: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | իրավունքների վերաբերյալ ավելի ճիշտ է օգտագործել բացառիկ և ոչ-բացառիկ լիցենզիայի տեր հասկացությունը: Արմինե Անդա Պրոդյուսեր, Ռեժիսոր, Սցենարիստ, Դերասանուհի Հոշկի ֆիլմ սպը-ի հիմնադիր ՀՀ կինեմատոգրաֆիայի օրենքի նախաձեռնող armineaa@yahoo.com, hoshkeefilm@gmail.com 37491505266hoshkeefilm@gmail.com 37491505266 | | |